Արձանագրության 4

«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.02.2019թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաքսապետյան, Հ. Հարությունյան, Ա.Հազարապետյան, Բ.Տեր-Թովմասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Ղավալյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված տեղեկատվության մասին

(Խ. Հակոբյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի «Զորաշեն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն, իսկ «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ն, համաձայն ներկայացված եզրակացության ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 161 507 ՀՀ դրամի չափով:

1.3 armeps համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին ծանուցում է ուղարկվել, որը ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում «Զորաշեն» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացրել (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները: «Նոր Բարեկարգում» ՓԲԸ-ն նույնպես ներկայացրել է որակավորման չափանիշների պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Վերոգրյալով պայմանավորված և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի համաձայն, հանձնաժողովը որոշեց մերժել «Նոր Բարեկարգում» ՓԲԸ –ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցում ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Խ. Հակոբյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Նոր Բարեկարգում» ՓԲԸ	Անբավարար
«Զորաշեն» ՍՊԸ	Բավարար

2.2 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ **«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20»** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում «ԱԳՐՈԱՏՈՄ» ՍՊԸ–ն, որպես բավարար գնահատված և 2-րդ տեղ գրաված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնման ընթացակարգի 2- րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակցի մասին

(Խ. Հակոբյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Զորաշեն» ՍՊԸ--ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Խ. Հակոբյան)

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 26.**02.2019թ.** հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ armeps համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Խ. Հակոբյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- **ԵՔ-ԳՀԾՁԲ-19/20»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Զորաշեն» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահող՝		Խ. Հակոբյան
Անդամներ՝		Ս. Մաքսապետյան
		Հ. Հարությունյան
		Ա. Հազարապետյան
		Բ.Տեր-Թովմասյան
Համակարգող՝		Լ. Ղավալյան